

# Մ Ա Ս Ի - Բ

## Հ ա ր կ ա բ յ ու ջ ե տ ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն հ ի մ ն ա կ ա ն ու ղ ղ ու թ յ ու ն ն եր ղ

### Միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները

2010 թվականին և 2011 թվականի անցած ժամանակահատվածում արձանագրված տնտեսական միտումները թույլ են տալիս արձանագրել, որ Հայաստանը հաղթահարել է ձգնաժամը, և ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք ապագա միջոցառումները, մասնավորապես հարկաբյուջետային քաղաքականության բնագավառում, ուղղված են լինելու տնտեսության զարգացման կայուն տեմպերի ապահովմանը, ինչը թույլ կտա հնարավոր սեղմ ժամկետներում վերադառնալ նախաձգնաժամային տնտեսական բարձր աճին:

ՀՀ 2012-2014թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի (այսուհետև՝ ՄԺԾ) և ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության ծրագրով ամրագրված սկզբունքներով: ՄԺԾ-ի համաձայն ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2012-2014թթ կտատանվի 21.17%-21.72% սահմաններում, իսկ ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվող եկամուտների դեպքում՝ 20.85%-21.64% սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրել է 2012-2014թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել 24.3%-24.1% սահմաններում:

Ստորև բերված աղյուսակ 1.1-ում ներկայացված են 2010-2012թթ հարկաբյուջետային քաղաքականությունն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. 1 2010-2012թթ հարկաբյուջետային անփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2010թ փաստացի <sup>1</sup>	2011թ ծրագիր <sup>2</sup>	2012թ նախագիծ
<b>Ա. Արտահայտված մլրդ դրամով</b>			
1. Ընդամենը եկամուտներ	759.7	852.4	910.0
այդ թվում՝			
- ներքին եկամուտներ	731.5	796.4	895.2
որից՝			
հարկեր, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	696.5	773.4	874.3
2. Ընդամենը ծախսեր	934.1	1,001.0	1,042.5
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	747.3	838.8	897.8
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	186.8	162.3	144.7
3. Ղեֆիցիտ (պակասուրդ)	174.4	148.6	132.5
<b>Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով</b>			
1. Ընդամենը եկամուտներ	21.7	22.7	21.6
որից՝			
- ներքին եկամուտներ	20.9	21.2	21.2
որից՝			
հարկեր, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	19.9	20.6	20.7
2. Ընդամենը ծախսեր	26.7	26.6	24.7
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	21.3	22.3	21.3
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	5.4	4.3	3.4
3. Ղեֆիցիտ (պակասուրդ)	5.0	3.9	3.1
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,501.6	3,763.5	4,218.6

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 21.6%-ի չափով կանխատեսված ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 3.1%-ի չափով ղեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2012 թվականին ապահովել ծախսերը ՀՆԱ-ի 24.7%-ի կամ 1,042.5 մլրդ դրամի չափով:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող հարկաբյուջետային ցուցանիշներն ընդհանուր առմամբ համահունչ են ՄԺԾ-ով հաստատված միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ՄԺԾ-ով նախատեսվածի դիմաց ավելացել է 17.1 մլրդ դրամով, պահպանելով ղեֆիցիտի մակարդակը:

Եկամուտների դեպքում նշված տարբերության գերակշիռ մասը՝ 15.9 մլրդ դրամը, պայմանավորված է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2012 թվականի մուտքերի ծրագրային

<sup>1</sup> 2010-2012թթ համադրելիությունն ապահովելու նպատակով 2010 թվականի փաստացի ցուցանիշներում ներառված չեն ՀՀ 2010թ պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառնության եղանակով ստացված եկամուտները և կատարված ծախսերը, ինչպես նաև 2011, 2012թթ չնախատեսված արտաբյուջետային հաշիվների 2010 թվականի փաստացի եկամուտներն ու ծախսերը:

<sup>2</sup> «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշները և դրանց հաշվարկման հիմքում դրված ՀՆԱ-ի մեծությունը:

մակարդակի ապահովմանն ուղղված՝ գալիք տարում օրենսդրական փոփոխություններ նախատեսող ՀՀ օրենքների նախագծերի շրջանառության մեջ գտնվող փաթեթով: